ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

N 18Ը -Ա　　　　　　　　　　　　　　　　　　　　*ք.Արտաշատ*

„13„ մայիսի 2026թ.

«ՄԱՍԻՍԻ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ ՀԱՐՈՒՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ուսումնասիրելով ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի ղեկավարի 08.05.2026 թ. N 01/30.3/3/3265-2026 գրությունը՝

ՊԱՐԶԵՑԻ

2026 թվականի ապրիլի 9-ին ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմինը /այսուհետ՝ Տեսչական մարմին/, ուսումնասիրելով «shamshyan.com» լրատվական կայքում հրապարակված հոդվածը՝ կապված Մասիս քաղաքի աղբավայրի հետ, հարուցել է վարչական վարույթ, որի շրջանակներում «Մասիսի բնակարանային կոմունալ տնտեսություն» ԲԲԸ-ի /այսուհետ՝ Ընկերություն/ տնօրեն Ֆելիքս Պողոսյանի կողմից տրված հայտարարությունում նշվել է, որ հրդեհը հավանաբար տեղի է ունեցել ինքնաիրկիզման արդյունքում

Համաձայն Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի /այսուհետ՝ Օրենսգիրք/ 2191-րդ հոդվածի 1-ին պարբերության՝ «Տարածքային կառավարման մարմինները քննում են սույն օրենսգրքի 48-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը՝ իրենց տնօրինության տակ գտնվող հողերի մասով, ինչպես նաև սույն օրենսգրքի 43.1-ին հոդվածի 1-ին, 1.1-ին, 2-րդ, 8.2-րդ, 9-րդ, 10.5-րդ և **10.6-րդ** մասերով, 152.1-ին հոդվածի 4-րդ մասով և 54.5-րդ հոդվածով նախատեսված իրավախախտումների վերաբերյալ գործերը»:

Օրենսգրքի 43.1-րդ հոդածի 10.6-րդ մասի համաձայն՝ «Շրջակա միջավայրի վրա վնասակար ազդեցության բացահայտման և կանխարգելման նպատակով աղբավայրի հսկողություն, ինչպես նաև աղբի ինքնայրումը կանխելու համար հակահրդեհային միջոցառումներ չիրականացնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում աղբավայրը շահագործողի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի ութսունապատիկից մինչև երկուհարյուրապատիկի չափով»:

Համաձայն «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ «Աղբավայրերը շահագործող օպերատորները շրջակա միջավայրի վրա վնասակար ազդեցության բացահայտման և կանխարգելման նպատակով իրականացնում են աղբավայրի հսկողություն, ինչպես նաև հակահրդեհային միջոցառումներ աղբի ինքնայրումը կանխելու համար»:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ պարզ է դառնում, որ աղբավայրի հսկողության, ինչպես նաև աղբի ինքնայրումը կանխելու համար հակահրդեհային միջոցառումներ չիրականացնելով՝ Ընկերության տնօրենը ցուցաբերել է անգործություն,այդ կերպ թույլ տալով առերևույթ խախտում:

Հաշվի առնելով վերոգրյալը, ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 43.1-րդ հոդվածի 10.6-րդ մասով, 2191-րդ հոդվածի 1-ին պարբերությամբ՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. «Մասիսի բնակարանային կոմունալ տնտեսություն» ԲԲԸ-ի տնօրեն Ֆելիքս Պողոսյանի նկատմամբ հարուցել վարչական վարույթ:
2. Սահմանված կարգով ապահովել վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության կազմումը:
3. Սույն որոշումը եռօրյա ժամկետում ուղարկել Ֆելիքս Պողոսյանին:

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝

Восстановимая подпись

Անդրադարձ
ԱՐՏԱՎԱԶԴ ՆԱԶԱՐԵԹՅԱՆ
2409881092

X

Подписано: NAZARETYAN ARTAVAZD 2409881092 ԱՐՏԱՎԱԶԴ ՆԱԶԱՐԵԹՅԱՆ